



«CAR ASSISTANT» ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

Խմբագրություն՝ խմբ. DS 01
(Ակտիվի դաս՝ հրապարակային)

1. ԻՆՉ Է «CAR ASSISTANT» ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Ավտոտրանսպորտային միջոցի շահագործման ընթացքում Երևան քաղաքում և Երևան քաղաքից 20 կմ շառավիղի ընդգրկող տարածքներում պատահար տեղի ունենալու դեպքում «CAR ASSISTANT» ծրագրի շրջանակներում տրամադրվում են հետևյալ ծառայությունները՝

- ✓ Շարժական վուչկանացման ծառայություն /անվադողերի վերանորոգում/,
- ✓ Մարտկոցի կցասնուցման ծառայություն,
- ✓ Էվակուատորի ծառայություն,
- ✓ Ապահովագրության հետ կապված ցանկացած խորհրդատվություն 24/7 ռեժիմով,
- ✓ Ապահովագրական հատուցման ստացում՝ առանց Ապահովագրողի գրասենյակ այցելելու, Ինչպես նաև
- ✓ Ավտոտրանսպորտային միջոցի վարորդի դժբախտ պատահարներից ապահովագրություն:

2. ՈՎՔԵՐ ԿԱՐՈՂ ԵՆ ՁԵՈՔ ԲԵՐԵԼ «CAR ASSISTANT» ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

«CAR ASSISTANT» ապահովագրության պայմանագիր կարող են ձեռք բերել.

- ✓ հաշվառված ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերերը,
- ✓ ավտոտրանսպորտային միջոցի վարձակալները,
- ✓ վարելու միջոցով ավտոտրանսպորտային միջոցներ ներմուծողները:

3. ԻՆՉ ՈՒՄԿԵՐԻՑ ԵՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՒՄ

«Նաիրի Ինշուրանս»-ն առաջարկում է պաշտպանություն ապահովագրական պատահարի արդյունքում առաջացած հետևյալ իրադարձությունների ի հայտ գալու դեպքում.

- ✓ Աշխատունակության ժամանակավոր կորուստ
- ✓ Աշխատունակության մշտական կորուստ
- ✓ Մահ



4. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՄԱՀՄԱՆԱԶՍՓԵՐ

Ապահովագրական հատուցումներն իրականացվում են Ապահովագրական գումարի նկատմամբ հետևյալ սահմանաչափերով՝

Շարժական վնասվածքների ծառայություններ Անսահմանափակ քանակությամբ

Բացառությամբ, եթե անվադրողի պահպանաչափերի նախշանկարի մնացորդային բարձրությունը ցածր է 1.6 մ-ից (թեթև մարդատար ավտոմեքենայի դեպքում), ապա տվյալ անվադրողի համար ծառայությունը մատուցվում է մեկ անգամ: Անվադրողերի վերանորոգում ծառայությունը չի մատուցվում 1.3 սմ-ից ավելի պատվածք կամ ձողվածք ունեցող անվադրողի դեպքում:

Մարտկոցի լիցքավորման ծառայություններ Անսահմանափակ քանակությամբ

Մարտկոցի կամ էլեկտրասնուցման համակարգի շարունակական խնդիրների բացահայտման դեպքում սույն ծառայությունը անսահմանափակ քանակությամբ չի մատուցվում:

Էվակուատորի ծառայություններ՝ մեկ պատահարի դեպքում մեկ տեղափոխում Անսահմանափակ քանակությամբ

Աշխատունակության ժամանակավոր կորուստ

Բուժման ծախսերի չափով, բայց ոչ ավել քան Ապահովագրական գումարի 50%-ը

Աշխատունակության մշտական կորուստ

- 1-ին խմբի հաշմանդամության ձեռքբերում Ապահովագրական գումարի 100%-ի չափով
- 2-րդ խմբի հաշմանդամության ձեռքբերում Ապահովագրական գումարի 75%-ի չափով
- 3-րդ խմբի հաշմանդամության ձեռքբերում Ապահովագրական գումարի 50%-ի չափով

Մահ Ապահովագրական գումարի 100%-ի չափով

5. ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ ԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՎՃԱՐ

Ապահովագրական գումար	Տարեկան ապահովագրավճար
600,000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ	14,900 (տասնչորս հազար ինը հարյուր) ՀՀ դրամ

6. ԻՆՉ ՏՎՑԱԼՆԵՐ ԵՆ ԱՆՀՐԱԺԵՇ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ

- ✓ Ապահովադրի անձը հաստատող փաստաթուղթ,
- ✓ Ավտոտրանսպորտային միջոցի տեխանձնագիր: